ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 19-Ա

ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-033-0012-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ՄԻՀՐԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել համասեփականատերեր՝Գագիկ Միհրանի Գասպարյանի (ծնված՝12.08. 1964թ.) և Թամարա Գառնիկի Գասպարյանի(ծնված՝24.10.1970թ.) դիմումը: Երանոս համայնքի 11-րդ փողոցի 3-րդ փակուղի թիվ 3 հասցեում գտնվող 05-033-0012-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,1317 հեկտար,որից՝0,1200 հեկտար մակերեսով հողամասն Գագիկ Միհրանի Գասպարյանին և Թամարա Միհրանի Գասպարյանին օրինական պատկանող հողամասն է:Հաշվի առնելով,որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման անհրաժեշտ բնակելի կառուցապատման հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1,2,3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում,ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի 2-րդ հոդվածի պահանջներով,<<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>>ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ

Որոշում եմ՝

1. Վերականգնել Երանոս համայնքի 11-րդ փողոցի 3-րդ փակուղի թիվ 3 հասցեում

գտնվող գույքային միավորների նկատմամբ Գագիկ Միհրանի Գասպարյանի(ծնված՝12.08.1964թ.,անձնագիր՝AM0751442 տրված՝31.05.2012թ,043-ի կողմից)և Թամարա Գառնիկի Գասպարյանի(ծնված՝24.10.1970թ.,անձնագիր՝AR0201881,տրված՝24.03.2017թ. 043-ի կողմից) սեփականության իրավունքը մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցած 164,38 քառակուսի մետր արտաքին չափերով (ներքին չափերը՝140,02 քառակուսի մետր, կառուցված՝1994 թվականին) անհատական բնակելի տան՝ մեկհարկանի, 38,17 քառակուսի մետր արտաքին և ներքին չափերով բնակելի տան կիսանկուղի՝ կառուցված 1994 թվականին,18,12 քառակուսի մետր արտաքին և ներքին չափերով բնակելի տան փակ պատշգամբի՝կառուցված 1994 թվականին,շենք շինությունների նկատմամբ:Օրինական՝0,1200 հեկտար (1200 քառակուսի մետր) մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին կից 0,0117 հեկտար(117 քառակուսի մետր) մակերեսի չափով տիրապետված և տիրապետվող հողամասը,որը համայնքի պարզեցված գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար,հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը,չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի,այդ թվում՝ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,օրենքի ուժով ճանաչել համասեփականատերեր Գագիկ Գասպարյանի և Թամարա Գասպարյանի սեփականության իրավունքը 0,0117 հեկտար (117 քառակուսի մետր) մակերեսով ավել օգտագործվող հողամասի նկատմամբ:

2. 05-033-0012-0004 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի և նրա վրա կառուցված շենք շինությունների հաշվառման հասցեն է՝ Գեղարքունիքի մարզ Երանոս համայնք, 11-րդ փողոց ,3-րդ փակուղի, թիվ 3:

3. 05-033-0012-0004 կադաստրային ծածկագրով հողամասի վրա առկա է 2018 թվականից կառուցված ինքնակամ օժանդակ շինություններ՝անասնաշենք 60,0 քառակուսի մետր արտաքին չափերով(ներքին չափերը՝48,87 քառակուսի մետր) ու պարիսպ՝29,15 արտաքին ու ներքին չափերով(L=29,15մ d=0,40մ),որոնք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ ապահովելու իրավունք,օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչել օրինական:

4.Սահմանել,որ ինքնակամ կառույց իրականացրած համասեփականատերեր Գագիկ Միհրանի Գասպարյանը և Թամարա Գառնիկի Գասպարյանը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում,Երանոս համայնքի բյուջեի N 900145102217 հաշվի պետք է վճարի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>>Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված հաշվարկված 36908(երեսուն վեց հազար ինը հարյուր ութ)ՀՀ դրամ օրինականացման վճարը՝որից՝
անասնաշենք ինքնակամ կառույցի օրինականացման համար(60,00x6000x0,069=24840)
պարիսպ ինքնակամ կառույցի օրինականացման համար (29,15x6000x0,069=12068):

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Հողամասի սահմանները որոշվում են Երանոս համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Մելիք Քարամյանի վրա:

29.02.2020

X

VERIFIED OCSP 29.02.2020 17:28:58 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

Подписано: BAVEYAN SASHA 1902730216

2020թ. փետրվարի28
գ.Երանոս